



ԳԱՆՏԵԳՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՏԵԳՅՈՑ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MOTRÉAL

ԿԻՐԱԿԻ 07 Յուլիս 2019

118

DIMANCHE, 07 Juillet 2019



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Դ ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ
QUATRIÈME DIMANCHE APRÈS LA PENTECÔTE.

Աստուածաշունչի Ընթերցումներ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՌՈՎՍԱՅԵՑԵՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
(7.25-8.11)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(12.38-45)

Les lectures de la Bible d'aujourd'hui :

ROMAINS

7.25-8.11

MATTHIEU

12.38-45

Պատարագիչ՝
Հոգեւոր Հովիւ

ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔԶՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Célébrant: Prêtre Paroissial

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Առաւօտեան Ժամերգութիւն 9:30-ին

Office Matines à 9 :30

Ս. Պատարագ Ժամը 11:30-ին

La Sainte Messe à 11:30

Հոգեհանգիստ Ժամը 12:00-ին

Requiem à 12:00

DIACRES - ACOLYTES

Chef de choeur: M. Sarkis Barsemian

Organiste: Mme Hourì Bedrossian

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՈՌՎՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (7.25-8.11)

Գոհութիւն Աստուծոյ մեր Տերոջը Յիսուս Քրիստոսին: Ուրեմն ես մտքով Աստուծոյ օրէնքին կը ծառայեմ ու մարմնով՝ մեղքի օրէնքին:

Իսկ արդ դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն, որոնք մարմնաւոր կերպով չեն վարուիր: Քանզի Քրիստոս Յիսուսով կեանքի հոգիին օրէնքը զիս ազատեց մեղքի եւ մահուան օրէնքէն: Վասն զի այն որ օրէնքին համար անկարելի էր, որովհետեւ տկար էր մարմնով, Աստուած իր Որդին դրկելով մեղանչական մարմնի նմանութեամբ ու մեղքի համար եւ դատապարտեց մեղքը այն մարմնին մէջ. Որպէս զի օրէնքին արդարութիւնը կատարուի մեր մէջ, քանի որ մարմնաւորապէս չենք քալեր, հապա՝ հոգեւորապէս: Քանզի մարմնաւոր եղողները մարմնին բաները կը մտածեն ու հոգեւոր եղողները՝ հոգիին բաները: Վասն զի մարմնաւոր խորհուրդը մահ է իսկ հոգեւոր խորհուրդը՝ կեանք ու խաղաղութիւն: Քանզի մարմնաւոր խորհուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է. վասն զի Աստուծոյ օրէնքին չի հնազանդիր, մանաւանդ չի կրնար այ: Վասն զի մարմնով եղողները չեն կրնար Աստուծոյ հաճոյ ըլլալ: Բայց դուք մարմնով չէք, հապա՝ հոգեւորով, եթէ Աստուծոյ Հոգին ձեր մէջ բնակած է. իսկ եթէ մէկը Քրիստոսին Հոգին չունի, անիկա անորը չէ: Եւ եթէ Քրիստոս ձեր մէջ է, ա լ մարմինը մեռած է մեղքի համար ու հոգին կենդանի է արդարութեան համար: Իսկ եթէ Յիսուսը մեռելներէն յարուցանողին Հոգին ձեր մէջ բնակած է, ուրեմն անիկա որ Քրիստոսը մեռելներէն յարուցանեց, պիտի կենդանացնէ ձեր մահկանացու մարմիններն ալ իր Հոգիովը որ ձեր մէջ կը բնակի:

ԱԻՏՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ (12.38-45)

Այն ատեն դպիրներէն ու փարիսեցիներէն ոմանք իրեն ըսին. «Վա՛րդապետ, կ'ուզենք քեզմէ նշան մը տեսնել»: Անիկա պատասխան տուաւ ու անոնց ըսաւ. «Չար եւ շնացող ազգը նշան կ'ուզէ: Ուրիշ

նշան պիտի չտրուի անոր, բայց միայն Յովնան մարգարէին նշանը: Քանզի ինչպէս Յովնան երեք օր ու զիշեր կէտ ձուկին փորին մէջ մնաց, այնպէս Որդին մարդոյ պիտի մնայ երկրի սրտին մէջ՝ երեք օր ու երեք զիշեր: Նինուէի մարդիկը դատաստանին օրը այս ազգին դէմ պիտի ելլեն ու պիտի դատապարտեն ասիկա, վասն զի Յովնանի քարոզութիւնովը գոջացին: Ահա Յովնանէն մեծ մէկը կայ հոս: Հարաւի թագուհին դատաստանին օրը այս ազգին դէմ պիտի ելլէ ու պիտի դատապարտէ ասիկա, վասն զի ինք երկրի ծայրերէն եկաւ Սողոմոնին իմաստութիւնը լսելու. եւ ահա Սողոմոնէն մեծ մէկը կայ հոս:

«Երբ պիղծ ոգին մարդէ մը ելլէ, անջուր տեղերը պտուղի՝ հանգըստութիւն փնտռէ ու չգտնէ. Այն ստեն կ'ըսէ. 'Դառնամ նորէն իմ տունս, ուրկէ ելայ': Կու գայ զանիկա կը գտնէ պարասպ, մաքրուած ու յարդարուած: Այն ստեն կ'երթայ ու իրեն հետ կ'առնէ եօթը ուրիշ ոգիներ իրմէ աւելի չար ու մտնելով հոն կը բնակին: Այն մարդուն վերջը առաջինէն գէշ կ'ըլլայ: Այսպէս պիտի ըլլայ այս չար ազգին ալ»:

ROMAINS

7.25-8.11

Je rends grâces à Dieu par Jésus-Christ notre Seigneur. Je sers donc moi-même de l'entendement à la Loi de Dieu, mais de la chair, à la loi du péché.

Il n'y a donc maintenant aucune condamnation pour ceux qui sont en Jésus-Christ, lesquels ne marchent point selon la chair, mais selon l'Esprit. Parce que la Loi de l'Esprit de vie [qui est] en Jésus-Christ, m'a affranchi de la Loi du péché et de la mort. Parce que ce qui était impossible à la Loi, à cause qu'elle était faible en la chair, Dieu ayant envoyé son propre Fils en forme de chair de péché, et pour le péché, a condamné le péché en la chair; Afin que la justice de la Loi fût accomplie en nous, qui ne marchons point selon la chair, mais selon l'Esprit. Car ceux qui sont selon la chair, sont affectionnés aux choses de la chair; mais ceux qui sont selon l'Esprit, [sont affectionnés] aux choses de l'Esprit. Or l'affection de la chair est la mort; mais l'affection de l'Esprit est la vie et la paix. Parce que l'affection de la chair est inimitié contre Dieu; car elle ne se rend point sujette à la Loi de Dieu ; et aussi ne le peut-elle point. C'est pourquoi ceux qui sont en la chair ne peuvent point plaire à Dieu.

Or vous n'êtes point en la chair, mais dans l'Esprit; si toutefois l'Esprit de Dieu habite en vous; mais si quelqu'un n'a point l'Esprit de Christ, celui-là n'est point à lui. Et si Christ est en vous, le corps est bien mort à cause du péché; mais l'esprit est vie à cause de la justice. Or si l'Esprit de celui qui a ressuscité Jésus des morts habite en vous, celui qui a ressuscité Christ des morts, vivifiera aussi vos corps mortels à cause de son Esprit qui habite en vous.

MATTHIEU

12.38-45

Alors quelques-uns des Scribes et des Pharisiens lui dirent : Maître, nous voudrions bien te voir faire quelque miracle. Mais il leur répondit, et dit : la nation méchante et adultère recherche un miracle, mais il ne lui sera point donné d'autre miracle que celui de Jonas le Prophète. Car comme Jonas fut dans le ventre de la baleine trois jours et trois nuits, ainsi le Fils de l'homme sera dans le sein de la terre trois jours et trois nuits. Les Ninivites se lèveront au [jour du] jugement contre cette nation, et la condamneront, parce qu'ils se sont repentis à la prédication de Jonas; et voici, il y a ici plus que Jonas. La Reine du Midi se lèvera au [jour du] jugement contre cette nation, et la condamnera, parce qu'elle vint du bout de la terre pour entendre la sagesse de Salomon; et voici, il y a ici plus que Salomon.

Or quand l'esprit immonde est sorti d'un homme, il va par des lieux secs, cherchant du repos, mais il n'en trouve point. Et alors il dit : je retournerai dans ma maison, d'où je suis sorti; et quand il y est venu, il la trouve vide, balayée et parée. Puis il s'en va, et prend avec soi sept autres esprits plus méchants que lui, qui y étant entrés, habitent là; et ainsi la fin de cet homme est pire que le commencement; il en arrivera de même à cette nation perverse.

ՑԱԻԱԿՅԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ
Հոգևոր Հովիւն, Ծխական Խորհուրդը եւ

Յարակից Մարմինները

Ողբացեալ **ՄԱՐԳԱՐ ՏԻՐԱՏՈՒՐԵԱՆԻ**

Մահուան տխուր առիթով

Իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն

հանգուցեալի բոլոր պարագաներուն, աղօթելով առ Աստուած,



Հոգևոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

Յարգելի հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ ,

Աւետարանին մէջ կան պատմութիւններ, որոնք, չես գիտեր ինչո՞ւ, ուշադրութեան չեն արժանանար, օրինակ՝ Մատթէոսի Աւետարանի 12-րդ գլխուն 43-45 համարներուն մէջ նշուած «Պիղծ ոգիին վերադարձի» բացատրութիւնը:

«Սակայն պիղծ ոգին դուրս կ'ելլէ մարդէն, կը շրջի անջուրդի վայրերուն մէջ, հանգիստ կ'որոնէ եւ չի գտներ: Յայնժամ կ'ըսէ՝ դառնամ իմ տունը, ուրկէ դուրս ելայ. եւ կու գայ ու գայն կը գտնէ դատարկ՝ մաքրուած ու կարգի բերուած: Այն ժամանակ կ'երթայ եւ կը վերցնէ իր հետ իրմէ աւելի չար եօթ այլ ոգիներ եւ կը մտնէ ու կը բնակի հոն. Եւ այդ մարդուն վերջը կ'ըլլայ աւելի վատ, քան առաջ էր...» (Մատթ. 12:43-45):

Միբելիներ, Սուրբ Գիրքէն գիտենք, որ մարդը կը ծնի Ադամական մեղքով, այսինքն մեր ծնած օրէն չարը կը բնակի մեր մէջ, միեւնոյն ժամանակ մենք մեր ճնողներէն, առաջին ուսուցիչներէն ու հոգևոր պատգամներէն կը սորվինք, որ այս երկրային կեանքին մէջ պարտաւոր ենք բարի գործեր կատարել, որպէսզի չարէն հեռու կենանք: Չարը կայ մեր մէջ, ձեռով մը կը կծկուի ու իրեն յարմար անկիւն մը գտնելով՝ կը սպասէ մեր հոգիներուն մէջ... Բարին, իշխանութիւնը իր ձեռքը վերցնելով, կը փորձէ մարդոց սիրով ու գեղեցկութեամբ լաւ կեանք պարգեւել:

Սակայն, վստահ եմ, որ մեզմէ ամէն մէկը, իր փորձառութենէն ելլելով, կրնայ ըսել, որ երբեմն հակառակը կը պատահի, երբ բարին իր դիրքէն կը զիջի եւ չարը, առիթը գործածելով վայրկեան մը

իսկ չի կորսնցներ, անմիջապես կ'անցնի գործի: Ատելութիւն, նախանձ, բամբասանք, բարկութիւն, անբարեացակամութիւն, ազահութիւն, ո՞ր մէկը ըսեմ, ինչո՞ւ չէ, նաեւ անտարբերութիւն: Մեզմէ ո՞վ ծանօթ չէ ասոնց:

Դժբախտաբար կը տեսնենք, որ մեր մէջ բարին ու չարը փոխն ի փոխ կ'աշխատին: Եթէ այդպէս է, ապա այդ շատ վտանգաւոր եւ ոչ աստուածահաճոյ կեանք է, որ մենք կ'ապրինք: Յիսուս կ'ըսէ, որ մարդը չի կրնար երկու տիրոջ ծառայել, մէկը պիտի ատէ, միւսը՝ սիրէ, չի կրնար միաժամանակ եւ՝ առողջ ըլլալ եւ՝ հիւանդ: Կա՛մ մէկը, կա՛մ միւսը:

Յարգելիներ, բոլորիս ալ քաջ յայտնի է, որ բնութեան մէջ ջերմութիւն պարունակող միջավայրին մէջ մանրէները զիրենք շատ լաւ կը զգան, արագ կը բազմանան ու կը տարածուին: Պիղծ ոգիին համար ալ հոգին իտեալական հանգիստի վայրն է, որուն մասին կը զգուշացնէ մեզ Տէրը: Սակայն մեղքին պատճառը միայն չարին գոյութիւնը չէ, այլ մանաւանդ մեր հաւատքին պակասութիւնն է: Այո՛, մի՛ զարմանաք, հաւատքին պակասութիւնը թուլութիւնն է:

Բժիշկները զանազան վարակիչ հիւանդութիւններու դէմ տարբեր դեղեր մեզ կը ներարկեն, որպէսզի մեր մարմինը կարենայ դիմադրել: Չարին դէմ պայքարելու համար մեր միտքը, սիրտն ու հոգին կարիքը ունին Աստուծոյ ճանաչումին, Անոր պատգամներու ներարկումին ու զօրացումին: Որքան Աստուծոյ հանդէպ հաւատքը խոր արմատներ թողէ մեր մէջ, այնքան մենք չարէն պաշտպանուած կ'ըլլանք:

Ինչո՞ւ սակայն մենք այսչափ կը վախնանք չարէն ու կը փորձենք հեռու կենալ անկէ, որովհետեւ չարը հոգիին խաւարն է, ան մեզ դէպի մահ կ'առաջնորդէ: Չարը չի կրնար մարդուն կերպարանափոխել, եթէ իրապէս անոր մէջ Աստուած կը բնակի:

Այս պատմութիւնը հետաքրքրականէ, եւ կը կոչուի «Աստուծոյ աչքերը քեզ կը նային»:

Գողերէն մէկը տեղի ամայութենէն օգտուելով, կը մտնէ եկեղեցի եւ կը սկսի Սուրբ Մեղանին վրայի ոսկեայ զարդերը լեցնել իր պայուսակին մէջ:

Եւ յանկարծ անոր աչքերը կը հանդիպին կէս բացուած Սուրբ Գիրքին, որ լուսաւորուած էր զոյգ մումակալներով:

Հետաքրքրութեան համար գլուխը կը ծռէ ու կը կարդայ կարմիրով ընդգծուած հետեւեալ նախադասութիւնը.

«Աստուծոյ աչքերը քեզ կը նային»:

Գլուխը կը բարձրացնէ ու կը տեսնէ Սուրբ Խորանին վերը կապոյտ ամպերով շրջապատուած Յիսուսին բազկատարած պատկերը:

Ահաւոր ցնցում մը կ'ապրի եւ կը կարծէ, թէ իր ոտքերուն տակ եկեղեցին կը շարժի: Անգամ մը եւս ուշադիր կը կարդայ գրութիւնը եւ պայուսակը թողելով Սուրբ Սեղանին վրայ, արագ կը փախչի Եկեղեցիէն:

Սիրելիներ, միշտ պիտի յիշենք, երբ սխալ ու անարդար գործեր կը կատարենք, Աստուծոյ ճանապարհով եթէ չընթանանք, երբ ազնիւ ու մաքուր կեանք չունենանք, Աստուծոյ աչքերը միշտ մեզի պիտի նային ու զգուշացնեն, որ փոխենք մեր կեանքին ապրելաձեւը դէպի բարին ու մաքուրը: Փախուստ չկայ, ուր որ ալ երթանք Անոր աչքերը մեզի կը նային: Իսկ պատիժը՝ անխուսափելի է:

Փորձենք մեր ընդմէջէն հանել չարը ոչ թէ գեղեցիկ խօսքերով, այլ հաւատքով ու մանաւանդ գործով, եւ ոչ թէ վաղը, այլ հիմա՝ ճիշդ այս պահուն: Դուք կրնաք հարցնել՝ ինչպէ՞ս: Շատ պարզ կերպով: Օրինակ՝ ամէն մէկս, գիտակցաբար թէ անգիտակցաբար, նեղացուցած կրնանք ըլլալ մեր բարեկամներէն, ընկերներէն կամ ծանօթներէն ոմանց կամ անոնք նեղացած կ'ըլլան մեզմէ, այս պահուն փորձենք ներել անոնց եւ ոչ միայն ներենք, այլ նաեւ ներողութիւն խնդրենք:

Մեր Տէրը սքանչելի օրինակ մըն է, քանի որ Ան խաչին վրայ Հօրմէն խնդրեց, որ ներէ Զինք տանջողները, չարչարողներն ու վերջապէս՝ խաչողները: Աստուած կը բնակի հոն, ուր կայ ներողամտութեան ոգին, որովհետեւ ներելը մեծ առաքինութիւն է: Եթէ սիրենք ու ներենք, հեռու կը մնանք չարիքէն, փորձանքներէն ու դժբախտութիւններէն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Օրհնութեամբ՝

Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան



ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ ԵՎԵՂԵՑԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

ALTAR FLOWERS:

Mrs. Silva Tursucu \$50

RENOVATION FUND RAISING CAMPAIGNE:

Church Exterior Walls Fundraising Renovation

We are very grateful to announce that besides our online donations our Church is receiving also offline donations as of the followings:

Mr. Roland Papazian, Mr. & Mrs. Kevork & Maral Partamian,
Mr. & Mrs. Norik & Zivart Grigoryan, Mrs. Irma Basmajian,
Mr. & Mrs. Avedis & Mary Basmajian, Mr. Aram Minasyan,
Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan,
Mr. & Mrs. Garbis & Hasmig Aposhian,
Mr. & Mrs. Garbis & Silva Ferah, Mr. & Mrs. Harout Jerjian,
Mr. & Mrs. Aret Cevahirciyan, Mrs. Hilda Tursucu,
Mr. Sarkis Balian, Mr. & Mrs. Varouj & Silva Mangassarian,
Mrs. Magda Zakarian, Mrs. Silva Karaoghlanian,
Miss Varsenig Nazoyan.

Online donations: \$4065

His Grace Bishop Abgar Hovakimyan, Primate of the Armenian
Diocese of Canada

Mr. & Mrs. Antranig Matossian, Mrs. Houry Manougian, Mrs. Lydia
Sossoyan Shahinian, Yvonne Gajdos Makdessian, Mrs. Silva Amadouni
Tokatlian, Mr. Henrik Mkrtoumian, Mr. Raffi Nazarian, Mrs. Ira
Tamigian, Mrs. Nelly Machurian, Mr. Garo Boghosian, Mr. Sarkis
Barsemian, Mrs. Michelle Boghosian, Mrs. Rachel Doramajian,
Adriana Bara, Mr. Mihran Artinian, Mr. Alexandre Babayan, Mrs.
Paratzem Gevorgyan, Mr. Vicken Darakjian, Mr. Hratch Bajakian,

Mrs. Edita Snkhchyan, Mr. Mike Bajakian, Mrs. Jasmine Takhmizdjian, Mr. Robert Krikorian, Mr. Aram Bedrossian.

Offline donations - \$3305

Online donations: \$4065

Ladies Auxiliary - Mini-Bazaar – Proceeds Allocated for the Church Renovation Fundraising: \$4225

Presently - Grand Total: \$11,595

We appreciate all our parishioners' efforts that have been put into action to make our church future truly bright and our Lord's House a prosperous place for all our prayers.

Thank you very much to all our parishioners for their support and generosity!

For Online donations please visit our Fundraising Campaign page: <https://bit.ly/2YcCyT>

ՏՕՆԵԼԻ ԱՆՈՒՆՆԵՐ

ՎԱՐԴԳԵՍ, ՎԱՐԴԱՎԱՌ, ՎԱՐԴ, ՊԱՏՐԻԿ, ԱԼՎԱՐԴ,
ԶԱՐՎԱՐԴ, ԼՈՒՍՎԱՐԴ, ՆՈՒԱՐԴ, ՊԱՅԾԱՌ,
ՎԱՐԴԱՆՈՅՇ, ՎԱՐԴԻԹԵՐ, ՎԱՐԴՈՒՅԻ, ՎԱՐՎԱՌԷ

NAME DAY CELEBRATION

VARTKES, VARTAVAR, VART, PARTICK, ALVART,
ZARVART, LOUSVART, NVART, BAYDZAR,
VARTANOUSH, VARTITER, VARTOUHIE, VARVAREE

ՇԱԲԹՈՒԱՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ

Դուն պետք է վարուիս այնպես, որ բոլորին համար, անոնք որոնք քեզ կը տեսնեն, բարի օրինակ ըլլաս անոնց: Դուն պետք է աշխատիս օգնել ուրիշներուն ոչ միայն խորհուրդներով, այլև՝ հիմնականին մէջ օրինակով:

Ս. Յովհաննէս Պոսքոյ (Տօն Պոսքոյ)

Վեճերով եւ արդարացումներով կլանուած միտքը չի կրնար քննաւնայ, խոնարհ միտքը երբեք չի յոգնիր եւ վեճերու ու արդարացումներու կարիք չունենար:

Սիսւէն Աթոսացի

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱՆ

Յուլիս – Juillet

8, Երկուշաբթի – Սրբոց վկայիցն Անտոնիոսի,
Թէոփիլոսի, Անիքսոսի եւ Փոտիոսի:

Lundi 8 – Jeûne. Fête des Saint martyres Antonios,
Théophile, Aicet et Photius.

9, Երեքշաբթի – Սրբոցն Դանիէլի մարգարէին եւ երից մանկանցն՝
Սեդրակայ, Միսաքայ եւ Աբեղնագովի:

Mardi 9 – Jeûne. Fête du Prophète Daniel et des trois enfants:
Sétrag, Misak et Apètnakov.

10, Չորեքշաբթի – Պահք
Mercredi 10– Jeûne

11, Հինգշաբթի – Սրբոց թարգմանչաց հարցն մերոց
Սահակայ եւ Մեսրովբայ:

Jeudi 11 – Jeûne. Fête de nos Saints Traducteurs,
St. Sahag et St. Mesrob.

12, Ուրբաթ – Պահք
Vendredi 12 – Jeûne

13, Շաբաթ– Սրբոցն Տրդատայ թագաւորին մերոյ,
Աշխէնի տիկնոջն եւ Խոսրովիդիստոյն:

Samedi 13 - Fête de notre roi Dertad, de la regne Achkhène
et de Khosrovatoukhd.



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ՝ ՉԱՐԷՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Իմ անձս քու ձեռքերուդ մեջ է միշտ,
եւ Սուրբ Խաչիդ կը յուսամ,
թագաւոր երկնաւոր:
Քու սուրբերուդ բազմութիւնը
որպէս բարեխօս ունիմ առջեւդ:
Դուն, որ կը մտածես ամենուս մասին,
մի անտեսեր Քեզի ապաւինողները,
այլ խաղաղութեան մեջ պահպանէ
պատուական եւ սուրբ Խաչովդ:
...Փրկէ տեսանելի եւ անտեսանելի թշնամիներէն:
Արժանի ըրէ գոհանալով փառք տալ քեզի
Հօր Եւ Սուրբ Հոգիի հետ,
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

PRIERE A LA SAINTE CROIX POUR ETRE PROTEGE DES MECHANTS

Mon âme est toujours entre tes mains et, dans
la sainte Croix, j'ai placé ma confiance, ô Roi du
ciel. Je regarde la multitude de tes saints comme in-
tercesseurs auprès de toi. O toi, le longanime envers
tous, ne méprise pas ceux qui ont trouvé refuge en
Toi, mais protège-les dans la paix avec ta précieuse
et sainte Croix.

...Délivre-nous des ennemis visibles et
Invisibles. Rends-nous dignes de te rendre grâces
et de te glorifier avec le Père et le Saint-Esprit,
maintenant et toujours et pour l'éternité de
l'éternité. Amen.

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԿԻՐԱԿԻ, 7 Յուլիս 2019



Տիկ. Այտա Գարիպեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իր սիրեցեալ հոր եւ ամուսնոյն՝
ԱՐՄԷՆ ԾԵՌՈՒՆԵԱՆԻ (ARMEN DZEROUNIAN)

ԵՒ

ԱՇՈՏ ԳԱՐԻՊԵԱՆԻ (ASHOD KARIBIAN)

Հոգիներուն ի հանգիստ



Տ. եւ Տիկ. Վազգէն եւ Սօսի Սեդրակեաններու
եւ զաւակներուն,

Տիկ. Սիլվա Սեդրակեանի
եւ զաւկին,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ մօր եւ մեծ մօր՝
ԱՐԱՔՍԻ ՕՏԷԹ ՍԵՂՐԱԿԵԱՆ (ARAXI ODETTE SETRAKIAN)

Սահուան 3-րդ տարելիցին առիթով
Ինչպէս նաեւ՝

Իրենց սիրեցեալ հոր եւ մեծ հոր՝

ՀԱՅԿ ԽՈՍՐՈՎ ՍԵՂՐԱԿԵԱՆԻ (HAIG KHOSROV SETRAKIAN)

Հոգւոյն ի հանգիստ



Տիկ. Մայրանյոջ Օզողլուի,
Տ. եւ Տիկ. Արման Էօզեանի եւ զաւկին,
Տ. եւ Տիկ. Անդրանիկ եւ Արմինէ Շիրինեանի,
Տ. եւ Տիկ. Տարօն եւ Լորա Շիրինեանի,
Տ. եւ Տիկ. Տէյվիտ եւ Քրիսթին Մադոտեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, **հօր եւ մեծ հօր՝**
ՍԱՐԳԻՍ ՕԶՕՂԼՈՒԻ (SARKIS OZOGLU)

Հոգւոյն ի հանգիստ

ԵՒ Իրենց մեծ ծնողաց

ՆԵՐՏԷՍ ՕԶՕՂԼՈՒԻ (NERSES OZOGLU)

ՀՌԻՓՄԻՍԷ ՕԶՕՂԼՈՒԻ (HRIPSIME OZOGLU)

ՄԱՐԱՆԷ ՕԶՕՂԼՈՒԻ (MARANE OZOGLU)

Հոգիներուն ի հանգիստ

Ինչպէս նաեւ՝

ՕԶՕՂԼՈՒ, ԿԻԻԼԷԶԵԱՆ ԵՒ ՓԱՌՌԻՆԱԿԵԱՆ

Գերդաստաններու համայն ննջեցելոց հոգիներուն ի հանգիստ
(Սուրճի սպասարկութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ)



Պրն. Պօղոս Աճեմեանի,
Տ. եւ Տիկ. Ալէն եւ Քաշա Աճեմեանի,
Տիկ. Ալին Աճեմեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ կնոջ, **մօր եւ մեծ մօր**
ԹԱԳՈՒՀԻ ԱՃԷՄԵԱՆԻ (TAKUHI AJAMIAN)

Մահուան առաջին տարելիցին առիթով

Ինչպէս նաեւ՝

ԱՃԷՄԵԱՆ ԵՒ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ

(AJAMIAN & SOGHOMONIAN)

Գերդաստաններու համայն ննջեցելոց հոգիներուն ի հանգիստ

ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ
Ս. ՊՍԱԿԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցույ
Հոգևոր Հովիւր, Ծխական Խորհուրդը եւ
Յարակից Մարմինները

ԱՐԱ ՍՎԱՃԵԱՆԻ ԵՒ
ՃԷՍԻՔԱ ՌՕՏՐԻԿ-ՍԷՐՔՈՒԷՅՐԱՅԻ

Պսակադրութեան ուրախ առիթով
Իրենց խորին շնորհաւորանքը կը յղեն
պսակադրեալ զոյգի Ծնողներուն եւ հարազատներուն,
մաղթելով որ Աստուածային Օրհնութեան արժանանան
իրենց կեանքի ամբողջ տեւողութեան:

CONGRATUALTIONS
ON THE WEDDING CEREMONY

The Pastor, Parish Council & Sub-Committees
of St-Gregory the Illuminator Armenian Cathedral
On the Wedding Ceremony of

ARA SVADZIAN &
JESSICA RODRIGUES-CERQUEIRA

Extend their heartfelt congratulations to their parents and family,
wishing them to receive God blessing throughout their life.

ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ
Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցույ
Հոգևոր Հովիւր, Ծխական Խորհուրդը եւ
Յարակից Մարմինները

ԱՊԻԿԷՅԼ ԼՊՈՐԹԻ ԵԱՍՍՅԻ

Սկրտութեան օրհնաբեր եւ ուրախ առիթով
Իրենց խորին շնորհաւորանքը կը յղեն մկրտեալի ծնողներուն
եւ բոլոր հարազատներուն, աղօթելով առ Աստուած,
որ փոքրիկն **ԱՊԻԿԷՅԼ ԼՊՈՐԹԻ ԵԱՍՍ**

Ս. Սկրտութեան աւագանէն իր վերստին ծնունդով արժանանայ
Աստուածային Օրհնութեան իր կեանքի ամբողջ տեւողութեան:



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցույ
Հոգևոր Հովիւր, Ծխական Խորհուրդը եւ
Յարակից Մարմինները

ԱԼԵՔՍ ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Սկրտութեան օրհնաբեր եւ ուրախ առիթով
Իրենց խորին շնորհաւորանքը կը յղեն մկրտեալի ծնողներուն
եւ բոլոր հարազատներուն, աղօթելով առ Աստուած,
որ փոքրիկն **ԱԼԵՔՍ ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆ**

Ս. Սկրտութեան աւագանէն իր վերստին ծնունդով արժանանայ
Աստուածային Օրհնութեան իր կեանքի ամբողջ տեւողութեան:



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցույ
Հոգևոր Հովիւր, Ծխական Խորհուրդը եւ
Յարակից Մարմինները

ԱՐԻԱՆԱ ԺՕԶԷՖԻՆ ԹԱԽՄԻԶՃԵԱՆԻ

Սկրտութեան օրհնաբեր եւ ուրախ առիթով

Իրենց խորին շնորհատրանքը կը յղեն մկրտեալի ծնողներուն
էւ բոլոր հարազատներուն, աղօթելով առ Աստուած,
որ փոքրիկն **ԱՐԻԱՆԱ ԺՕԶԷՅԻՆ ԹԱՆՄԻՉՃԵԱՆ**
Ս. Մկրտութեան ասագանէն իր վերստին ծնունդով արժանանայ
Աստուածային Օրհնութեան իր կեանքի ամբողջ տեւողութեան:

CONGRATUALTIONS ON THE
BAPTISMAL CEREMONY

The Pastor, Parish Council & Sub-Committees
of St-Gregory the Illuminator Armenian Cathedral
On the Baptismal ceremony
of the child

ABIGAIL LIBERTY YASA

Extend their heartfelt congratulations
to the child parents & family.



The Pastor, Parish Council & Sub-Committees
of St-Gregory the Illuminator Armenian Cathedral
On the Baptismal ceremony
of the child

ALEX TER-STEPANYAN

Extend their heartfelt congratulations
to the child parents.



The Pastor, Parish Council & Sub-Committees
of St-Gregory the Illuminator Armenian Cathedral
On the Baptismal ceremony
of the child

ARIANA JOSEPHINE TAKHMIZDJIAN

Extend their heartfelt congratulations
to the child parents.





**ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ Ի ՄՈՆՏՐԵԱԼ**

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ՏՕՆ

ՎԵՐԱՓՈՒՄԱՆ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

**ԿԻՐԱԿԻ, 18 ՕԳՈՍՏՈՍ 2019
ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՄԲ. ԳԱՏԱՐԱԳ
ԵՒ ԽԱՂՈՂՈՐՀՆԷՔ**

առաւօտեան ժամը 10:30-ին

Գառարագիչ՝

**ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԲՀՆՅ. ՍԱՐԳՍԵԱՆ
Հոգևոր Հովի**

Յաւարտ Ա. Գառարագի

«Խորովածի Սպասարկութիւն»

նախաձեռնութեամբ՝

Միակն խորհուրդի

Մասնակցութեամբ՝

Գոլասնայ Միութեան հաստատարիմ հայորդեաց

«Անուշեղէնի «հաճառ» կազմակերպութեամբ՝

Տիկնանց Յանձնախումբին

Եկեղեցւոյ պարտեզին մէջ:

Մտարի Կուր՝ \$20



ASSUMPTION OF HOLY VIRGIN

SUNDAY, AUGUST 18, 2019

**DIVINE LITURGY
AND BLESSING OF GRAPES**

at 10:30 am

Celebrant

REV. FR. DAVID MARGARYAN, Parish Priest

At the end of the Blessing of the Grape,
the service of B.B.Q. organized by the Parish Council
with participation of Bolsahay Cultural Center

Pastry sales,
by assistant ladies from the church.



Entry \$ 20

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

Website: www.saintgregory.ca / Email saintgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**



**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՅՑ**



**Տ. ԴԱԻԹ ՔԻՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ
ՀԵՏ**

**Տեղի կ'ունենայ ամեն Հինգշաբթի,
երեկոյեան՝ ժամը 7:00-ին եկեղեցւոյ մէջ**

**Études bibliques et discussions
avec le R.P David Margaryan**

**Il aura lieu chaque jeudi
à 19h00 à l'église**

**Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները
մասնակից ըլլալու
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեանի՝
ներկայացուցած
Աստուածաշնչական նիւթերուն**

**Nous invitons nos chers fidèles à participer à ces
séances d'interprétations bibliques.**

**Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն
Une collation de café et de thé est servie**

**Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին երկայնութիւնը
Nous comptons sur votre participation massive**



**615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:
(514)279-8008/ stgregorychurch@gmail.com**

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՄՈՆՏՐԵԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ ԱՈՒՋՆՈՐԴԱՆԻՍ ԵԿԵՂԵՑԻ
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ԼԱՎԱԼԻ Ս. ԽԱՉ ԴՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՈՒԹԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
HOLY CROSS ARMENIAN APOSTOLIC CHURCH OF LAVAL

ՕՏԹԱՈՒԱՅԻԻ Ս. ՄԵՏՐՈՊ ԴՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՈՒԹԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
ST. MESROB ARMENIAN APOSTOLIC CHURCH OF OTTAWA

ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅՄԱՈՒԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՕՆ (ՎԱՐՊԱԿԱՈ)
TRANSFIGURATION OF OUR LORD JESUS CHRIST (VARTAVAR)

ՈՒՆՏԱԳՆԱՑՈՒԹԻՆ ԴԵՊԻ ՌԻԿՕ

PILGRIMAGE TO RIGAUD

43 RUE DE LOURDES, RIGAUD, QC

ԿԻՐԱԿԻ, 28 ՅՈՒԼԻՍ /SUNDAY, JULY 28, 2019



Հանդիսաւոր Ս. Էւ Անմահ Պատարագ / Holy Mass
կէսօրին ժամը / at - 12:30 noon

Պատարագիչ և քարոզիչ / Celebrant

ԳԵՐԸ. Տ. ԱՐԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Առաջնորդ Գանատահայոց Թեմի

HIS GRACE BISHOP ABGAR HOVAKIMYAN / Primate

Ուշադրութիւն. Ճաշի մատուցում միմիայն Ս. Պատարագէն ետք

Attention: The Lunch will be served only after the Holy Mass

Վարդավառի Տօնի Աւանդական Զրախաղ
(փոքրերուն համար փոխնորդ հագուստներ ունենալ)

Festive Traditional Water Play

(Don't forget to have extra cloths for kids)

ՕՏԹՊԻՄԻ ՄԵՎՆՈՒՄ

Մոնթրէալ - Next to Depaneur Couche Tard in front of Normandie Shopping Center
(Rue Salaberry) առաւօտեան ժամը 10:00-ին

Լաւալ - Ս. Խաչ Հայց. Առաք. Եկեղեցի (St. Martin O.) առաւօտեան ժամը 10:30-ին

Սակ - \$35 (Օթօպիւս և ճաշ) / Սակ Փոքրերու - \$25 (Օթօպիւս և ճաշ)

Անձնական Սիչոց (մեծերու և փոքրերու) - \$25 (ճաշ)

BUS TRANSPORTATION

Montreal - Next to Depaneur Couche Tard in front of Normandie Shopping Center
(Rue Salaberry) at 10:00 am

Laval - Holy Cross Armenian Church (St. Martin O.) at 10:30 am

Fee - Adult - \$35 (Bus & Lunch) / Fee - Child - \$25 (Bus & Lunch)

Personal Transportation Adults / Children - \$25 (Lunch)

- Պարտադիր է նախապէս տեղերը ապահովել և տոմսերը գնել հեռաձայնելով
նշեալ թիւերէն մեկուն մինչև 27 Յուլիս.-

- For reservation & tickets please call one of the following phones until July 27th

- Մոնթրէալ / Montreal - (514) 279-3066

- Լաւալ / Laval - (514) 609-8384

- Օթթաուա / Ottawa - (613) 762-7341



ՈՒԻՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

PILGRIMAGE TO

ARMENIA

02.10.2019



PÈLERINAGE EN

ARMÉNIE


15.10.2019



Հայաստանեայց Առաքելական Սուրբ
Եկեղեցւոյ Դանատահայոց Թեմը
Օրհնութեամբ
Դանատահայոց Թեմի Առաջնորդ,
Գերջ. Տ. Արգար եպիսկոպոս Յովակիմեանի՝
կը կազմակերպէ 14 օրեայ Ռւխտազնացութիւն
դէպի Մայր Հայաստան:
Մանրամասնութիւններու համար հանցէք
հեռաձայնել կամ գրել Առաջնորդարան:




The Armenian Diocese of Canada,
with blessings of
His Grace Bishop Abgar Hovakimyan, Primate
is organizing a 14-day pilgrimage to Armenia.
For details, please contact the Diocese.




Le Diocèse arménien du Canada
organise un pèlerinage de 14 jours en Arménie,
avec bénédictions du
Primat, Sa Grâce Mgr Abgar Hovakimyan.
Pour plus de détails, veuillez contacter le
Diocèse.



USD \$1.400 PER PERSON IN DOUBLE ROOM
SINGLE SUPPLEMENT \$400



Price includes: Hotel accommodation with Breakfast,
14 Lunches, 1 Dinner, Entrance fees to the sites,
Transportation, Professional Guide
Not included: Visa fee, Airfare, Insurance.



FIND AND JOIN

the «Armenian Diocese of Canada»
on Facebook to receive and
share news about the Diocese.



WATCH

a documentary about the Pilgrimage. Find
the «Armenian Diocese of
Canada» Channel on YouTube.





ԱՐԱՐԱՏ ՃԱՄԲԱՐ 2019

ՇԱԲԱԹ, Օգոստոս 10--Օգոստոս 17, 2019

Մասնակցի շաբթուայ մը բացօդայ ճամբարին, ուր ինզիսրդ պիտի զգաս Հայկական մթնոլորտի մէջ եւ ուր պիտի հաստատես երկարատե բարակամութիւններ եւ ուրիշ ակամայ պիտի բաժնուիս անտրանայի



Դիմուժագիրերը կարելի է հայթայթել www.campararat.ca կայքէջէն:
Հաճեցէք դիմուժագիրերը դրկել եւ վճարուժները կատարել մինչեւ Ապրիլ 1, 2019
Իւրաքանչիւր մասնակցողի համար վճարել \$555.00:
Տեղերը սահմանափակ են, հաճեցէք ձեր դիմումը չուշացնել

Ցանելալ տեղեկութեան համար հաճեցէք մեզ հետ կապ հաստատել campararat@gmail.com
հասցեով, կամ հեռաձայնել Անի Ալթունեանին 905-891-8216, կամ դիմել ձեր ծուխի Հոգեւոր
Հովիին եւ Մխական Նորհուրդին

Արարատ ճամբարին առաքելութիւնն է Պանատանայ երիտասարդին տրամադրել այնպիսի զուարթ, ապահով եւ
դաստիարակչական միջավայր մը, ուր ան փորձառական հմտութիւն ունենայ Քրիստոնէական հասարկին, իր Հայկական
պատկանելիութեան, ինչպէս նաեւ կատարելագործել իր ընկերութեան, եղեղեցիին ու համայնքին օգնելու յատկութիւնները:

ԵԿԷՔ ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՅԻՆ



Եկեղեցոյ պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հաւատացեալներ,

Միրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Արծաթեայ Սկիի
- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեգոյն ասեղնագործ ծածկոց
- Հոգևորականաց հողաթափեր
- Սկիիի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Շուրջառներ
- Մեծ Պահքի կամ Աւագ շաբթուան յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մտուր
- Եկեղեցոյ տօնածառ
- Ճրագալոյցի եւ Տեառնդատաջի համար նախատեսուած դուրսի մուկեր
- Ջրօրինէքի Սափոր
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր կարմիր եւ սև

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբոխ նուիրատուութեամբ մասնակից դառնալ եկեղեցոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել եկեղեցոյ հովիւին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

«Այս երկրի մէջ ցանէ՛րու հացը, որպէսզի երկնքի մէջ զայն հարիւրով պտուղ տուած գտնես»:

«Հոգևոր հայելի»

Կանխայայտ շնորհակալութեամբ,
Հոգևոր Հովիւ եւ Օխական Խորհուրդ



**ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ**

**CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,
հաճոյրով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ. է. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Address : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2